

Նշան Ձիաուորացու էր խաչ կարմիր՝ զպատկեր Սրբոյն Վլասայ՝ ՚ի միջին ունելով. զգեստ՝ ասուեայ սպիտակ: Զպատկերս երկոցուն եւս դասուց անուանեալ Հայ ձիաուորացս՝ ընծայէ ոմն<sup>122</sup> յ'ասպետագիր հեղինակաց, որ եւ մեծ խնամով ասէ հետախուզեալ եւ ճշգրտագոյն զձեւսն աւանդեալ, որպիսի է աշխարհիկ կամ զինուորական Ձիաուորն ՚ի հանդիպակայ պատկերիդ: Ա՛յլ ոք՝ կապուտագոյն ասէ զհանդերձսն, եւ զխաչն ոսկեղէն առ հայկական առիւծու<sup>123</sup>: Երկոքին եւս թուին ՚ի նկարէն պատկերաց լատին կամ փռանկ ձեռագրաց առեալ եւ աւանդեալ. ՚ի մեր հայերէն ձեռագիրս չեմք հանդիպեալ այսպիսեաց զինագգեստից ձիաուորաց. որոց՝ եթէ այսպէս եւ եթէ այնպէս ինչ էր ձեւն, սակայն աներկբայ եւ անհերքելի է գոյութիւն ասպետաց Հայոց ՚ի հարստութեան Միսուանեայց, դրուատելոց ըստ նախնեացն քաջաձիոց մերոց Հայկազանց, Մամիկոնեանց եւ Բագրատունեաց. որպէս, նախ մեծս Լեւոն կոչի *Ձիավարժ հմուտ*, եւ դաստիարակեալն ՚ի նմանէ Ռուբէն-Ռեմունդ՝ *Ձիավարժ գովելի*. նոյնպէս Հեթում Ա, որ նախ՝ հեծեալ դրոշմեաց զպատկեր իւր ՚ի դրամս, ապա եւ որդիք իւր, եւ նոցին յաջորդք, որպէս է տեսանել յիւրաքանչիւր դրամս<sup>124</sup>:

Որպէս ՚ի հնումն՝ ՚ի Մեծ Հայս, նոյն եւ աստանօր ՚ի Միսուան, մեծ զօրութիւն զինուորութեան Հայոց՝ էր հեծելագունդն, եւ այնու բազում անգամ յաջողեցան ընդդէմ եւ ՚ի վերայ Եգիպտացոց. եւ ոչ զանգիտեմ ասել, եթէ յայսմ մասին ոչ անարժանք գտան Ձիաուորքն Միսուանայ՝

<sup>122</sup> Schoonebeck.

<sup>123</sup> Qui (La Croix) servait de brisure au lion d'Arménie.- **Ջաւէն, Favin, Théâtre d'honneur.**

<sup>124</sup> Ծանուցաք ուրեք (յեջ 32), սորին Հեթոմյ Ա թարգմանել տուեալ զարուեստ Պայտարի յարաբ լեզուէ. ոչ զիտեմ այնր գրոց մասն իցէ եթէ այլոյ՝ *Գրաստուն Բժշկարանն* (Ձիարուծութիւնն, *Vétérinaire*), գորոյ գլուխս ինչ բանից ունիմք՝ ՚ի մագաղաթի գրեալ՝ յԺԳ դարու, ըստ ցուցակութեան տառիցն, եւ լեզուն խառնութեամբ փռանկ բառից ինչ նման է Սմբատայ թարգմանութեանն Ասսիզաց եւ Օրինագրոց. օրինակ իմն. Առաջին գլուխն կամ յօդուածն, որ է «*Յաղագս Կաղնալոյ*»: Գրաստուն կաղալն երկու ցեղ է. է որ ՚ի ծածուկ կաղայ, եւ է որ յայտնի. եւ որ կամենայ ճանաչել՝ այս է նշանքն. Որ ՚ի մէկ ոստիցն կաղայ՝ նա ՚ի գլխոյն շարժելն ճանչուի եւ ՚ի *կալօփցնելն* (galoper). եւ յորժամ հալձեցնեն զձին եւ կանգնեցնեն՝ որ պաղէ, եւ ձեռօք փնորեն յերին եւ ՚ի ծունկք եւ ՚ի կոճքն եւ ՚ի սմբակքն եւ ՚ի յետի ոտնուին, նա երեւնայ թէ ուստի կու կաղայ: Եւ յորժամ ՚ի դոյր քարուտ գետին կալօփցնեն, նա թէ ՚ի սմբակն կենայ կաղութիւն՝ նա երեւնայ. եւ թէ չլինի ՚ի սմբակն՝ նա երբ ընդ դար ՚ի վեր հանեն, կամ որ ՚ի սանդղամատն կոխէ՝ նա ՚ի վերայ բազկացն վախ հաստի: Եւ յորժամ թապլի գրաստուն՝ նա առաւել յայտնի կաղութիւնն: Եւ երբ յանկասկած ՚ի շուռ ածեն զգրաստուն՝ ՚ի մէկ դեհն ու ՚ի մէկայլն, նա թէ ՚ի կուրծքն կամ ՚ի բէճքն կենայ կաղութիւնն՝ նա երեւնայ»: